


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Երկուսուց մէկը 8 ՄԶՃ.
Վեցամսեայ Երկուսուց մէկը 4 ՄԶՃ.
Չամսեայ Երկուսուց մէկը 3 ՄԶՃ.
Գումար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, տեղի անգամներու
համար գատ սակարկութիւն կը-
լայ :



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 24 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ղիտինի բանակին հրամանատար Օսման փաշայէն յուլիս 18 և 19 թը-
ւով եկած հեռագրեր կը ծանուցանեն
թէ յուլիս 18ին (երկուշաբթի) առա-
ւօտուն ժամը 1 1/2ին Ռուսը մեծ զո-
րութեամբ երեք կողմէ յառաջ քաշ-
եալ երկու ժամ թնդանթովով պատերազ-
մէն ետեւ սաստկապէս իրենց բռնած
դրեց վրայ յարձակեր են : Պատե-
րազմը մինչև իրիկուան 2 1/2ը տեւե-
ր, և Օսմանեան զօրաց կորուլի գլխադ-
րութեան վրայ Ռուսը յետո նահան-
ջելու պարտաւորուեալ են : Գիշերը
մերթ ընդ մերթ հրացանի հարուած-
ներ կը լսուէին, և կը կարծուէր թէ
հետեւեալ օրը Ռուսը դարձեալ պիտի
յարձակէին : Չերբակալ եղած դեր-
ւայ մը խօսքին նայելով Ռուսաց զո-
րութիւնը վաթսուս հազարի չափ հե-
տեւեւ, երեք վաշտ հեծեալ իրենց
սուս թնդանթով էր վեց գունդի բաժ-
նուած, որոց երեքը միայն կուռեցան :
Հետեւեալ օրը երեքշաբթի թըշ-
նամին նորէն յարձակումն սկսե-
ր ժամը 1 1/2ին միջոցները : Թնդանթ-
ով իրաւուն կուռէ մ'ետեւ, որ մէկ ժա-
մու չափ տեւեւ է, Ռուսը նորէն քա-
նիցս յարձակումը երեք են Օսմանեան
զօրաց պատենէն իրենց վրայ, բայց ա-
մեն անգամ յետո մղուելով, վերջա-
պէս իրենց բանակեալը քաշուե-
ր են :

Այս երկու առուրց արկունուշա-
տը, կըսէ Օսման փաշա, առանց չա-
փազանցութեան ու թէ հաղորդէն առ-
ի մեռեալ, և կը կնարկուի ու ե-
ռապատիկ վերաւոր եղած է :

Կայսերական զօրքն հետեւեալ զօ-
րաց վերաբերեալ ազգամթերքով լի
անտուկ մը, չորս ձի, անթիւ հրացան
և այլ պատերազմական մթերք ձեռք
ձգեւ են : Իսկ իրենց կորուստն է ե-
զեր ընդ ամբողջ 100 մեռեալ և 300
վիրաւոր :

Թրակիոյ կողմը Սիւլէյման փա-
շա և Բէնիֆ փաշա ինչի Զաղրայի
առջև միացած են : Ռուսը ետ քաշ-
ւած կը երեւնայ իրենց յորութիւնը հա-
մախքներու համար : Սիւլէյման փա-
շայի բանակն հիմայ քառասուն հա-
զար զօրաց կը հասնի, և յարձակո-
ղական դիրք բռնելու կը պատրաս-
տուէր : Հետեւեալ օրը կողմն ալ
մեծ պատերազմ մը յուսալի է :

Անցեալ հինգշաբթի օրը Բաղլը-
բատի մօտ եղած պատերազմին վը-
րայ ետքէն եկած տեղեկութեանց նա-
յելով Գիշերը Սիւլէյ փաշան Բաղլը-
բատի հիւսիսային արեւմտեան կողմը լամ
գետին եզերքը Սասնիս գիւղին եր-
կու վաշտ զօրք զրկած էր հետագո-
տութիւն մ'ընելու համար, և ինչն

երեք վաշտ զօրք ուրիշ գիւղ մը
մնացած էր : Ռուսը անտառի մը մէջ
տանն հինգ վաշտ զօրք և թնդա-
նթներ դրած ըլլալով, Օսմանեան
զօրաց վրայ յարձակեր են, յանկարծ, և
սաստիկ կրակ ընելով յետո նահանջ-
ման գիծն ալ կտրեւ են : Ազիլ փաշա
այս լուրն առնելով անմիջապէս երեք
վաշտ զօրաց զըլլան անցեր և թըշ-
նամայն վրայ յարձակեր է : Բայց
կործնէն գնդակով մը դարձուե-
ր են, և իւր երկուսն ալ ռուսքով մ'երկու-
կտոր եղեր է : Անմիջապէս իւր տեղը
Ֆէյզուլլահ փաշան անցնելով, սուլ-
նով յարձակում մ'ընել տուե-
ր, Ռուսաց ձախ թեւէն անցնելով Օսմանեան
երկու վաշտ զօրաց մնացորդն հետ
միացեր, և կանոնաւոր յետո նա-
հանջում մ'ըրեր է վիրաւորեալներն
ալ ի միասին բերելով, թէ և չէ կրցե-
ր արդեալ որ Ռուսը լամ գետին աջ
կողմը նպատաւոր դիրք մը գտնու-
նէ, յաջողահ փաշա ինք ալ սրունքէն
ու բազկէն վիրաւորուե-
ր են, և երեք հարիւր վիրաւորեալ, որոց մէջ քանի
մը սպայք ալ կը գտնուէին, վարնայի
հիւսիսեւորեւոր հասեր են : Օսմանեան
զօրաց կորուստն եթէ հարիւրի կը
հասնի մեռեալ և վիրաւոր, և երկու
թնդանթով ալ կորսուած է : Ռուսաց
կորուստն աւելի շատ կը կարծուի,
քանի որ պատերազմը խիստ սաստիկ
եղած էր :

Սիւլէյմանի կողմն Օսմանեան զօրքը
գետին և ցամաքէն զննութիւն մ'ը-
րեր է անցեալ ուրբաթ առաւօտ :
Թնդանթն յառաջնապայով թեւն ին-
չան մը չէր տեսնուե-
ր : Գլխաւորի կը-
նին մէջ ռուսներու ետին թըշնա-
մայն մէկ դարձեալ նկատելով գետին
և ցամաքէն Օսմանեան զօրքը կրակ
ըրեր և Ռուսերն ի փախուստ դար-
ձուցեր է :

Օսմանեան զօրաց լօճիկ մասնը
խիստ սրաշարժ եղեր է : Լօճիկի
գլխաւորը կը հեռագրէ թէ իսկ
Բիֆաթ փաշան վեց վաշտ հետեւեւ,
երկու հազար հեծեալ զօրք և ութ թըշ-
նանթով յիշեալ քաղաքէն քառորդ-
մը հեռի պիտի ելան հասեր է : Թըշ-
նամայն երեք վաշտ հեծեալ զօրք Օս-
մանեան թնդանթներէն շարքուեր
և ամիրայներուն մէջ գտնուած Ռու-
սաց երկու վաշտ հետեւեւ զօրքն,
որը երկու թնդանթով միայն ունէին,
հեծեալ զօրաց կորուստը տեսնելով
Սիւլէյի կողմը փախեր են՝ առանց
գլխաւորութեան : Ռուսը լօճիկի
բանտին մէջ եթէ անասուն չափ իս-
լամը բանտարկած էին, բայց ի կին-
րէ և մանկութիւններէ, որը Օսմանեան
զօրքն իրեն ապատարար ընդունելով
Ռուսաց ձեռքէն իրենց կրած բռնու-
թիւնները կը պատմէին : Բիֆաթ փա-
շա ձի նստած փողոցները շրջադայեր
և բնակիչներուն քաջաբերութիւն տը-
ւեր է, տեղական կառավարութիւնն

ալ, ինչպէս արդէն ծանուցած էինք,
վերահաստատուելով, իւր պաշտօնը
կատարել սկսեւր է :

Ահմետ Մուխթար փաշայի մէկ
հեռագիրը Կարսի կողմը հեծեալ զօ-
րաց պատերազմ մը կը ծանուցանէ :
Ռուսը իրենց բանակեալն ետ տանել
սկսելով այս շարժումը ծածկելու հա-
մար տանները գունդ հեծեալ զօրք
և թնդանթներ հաներ են Ձէնի կող-
մը : Ռուսը Եահիի բլուրը գրաւել կու-
ղէին, բայց Եահի փաշայի հրամա-
նաց ներքե Օսմանեան հեծեալ զօրք
վրայ հասնելով երկու կողմէն Ռուս-
ը պատեր, և բլուրին գլուխ ելն-
ելով սաստկապէս անոնց վրայ յարձա-
կեր են, որը երկու բլուրը մէջ տեղէն
յետո նահանջելու պարտաւորուե-
ր են : Նոյն միջոցին Հիւսէյին Համի փաշա-
յի հեծեալ զօրաց գունդն ալ հասնե-
լով, թնդանթն հեծեալ զօրաց վրայ
ռուսը տեղալ սկսեւր են, և Ռուսերն
ի փախուստ դարձուցեր են : Համի
Բաշիտ փաշային գունդը թնդանթն
յետո նահանջման գիծը կտրել սկսե-
լով, Ռուսը շրջանաւարտ շարժումը
մը հաղիւ կրցեր են իրիկուան գէ-
մին իրենց բանակեալը գտնուել : Այս
պատերազմին մէջ եթէ զերի բլու-
նուեր են, չորս լէզիկ ալ իրենց կամ-
քով անձնատուր եղեր են : Ռուսաց
հեծեալ զօրքն եթէ հազարի չափ էր,
մինչդեռ Եահի փաշայի հեծեալ զօրքն
հազար հինգ հարիւր հազի էր, որ
իրմէ քառասուսիկ աւելի բազմաթիւ
թնդանթով փաներ է :

Իսմայիլ փաշային մէկ հեռագիրը
կը ծանուցանէ թէ Մասնի կէտիկէն
զրկուած Բիւրա հեծեալ զօրք զահման
անցնելով, թնդանթն մէկ պահակա-
նոցն պրեր են : Յուլիս 14ին Ռու-
սաց հապատակ եղիւ հեծեալ զօրքն
երկու հարիւր հազի սահմանագլուխ
անցնելով Ռուսիային գաղթող քառա-
սունի չափ ընտանիք բռնութեամբ
ետ տանել կուղէին : Բայց Օսմանեան
հեծեալ զօրքն անոնց վրայ յարձակե-
լով վաներ, և գաղթականները ճի-
ւարտի կողմը հաստատուե-
ր են : Օսմանեան զօրքն մեռեալ մը միայն
պատահե-
ր է, իսկ թնդանթն հինգ վեց
մարդ կորուսե-
ր :

Թէ և տակաւին մեծամեծ ճակո-
տամարտներ չեղան, բայց պատե-
րազմն արդէն մեծապէս ընդարձա-
կեցաւ, և երկու կողմն ահադին զօ-
րութիւն կը պատրաստեն : Ռուսաց
Էւրոպական և Ասիական բանակները
վեց հարիւր հազար հազի կը հաս-
նին, և Օսմանեան բանակներն ալ
գրեթէ նոյնչափ են : Բայց Ռուսը
պատերազմական յաջողութեանց մե-
տին Նիկոպոլայ առաւմէն գատ ուրիշ
գէտը մը չեն կրնար ցուցնել : Նիկո-
պոլայ մէջ հինգ հազարի չափ Օսման-
եան հետեւեւ զօրք վեց եթէ թըշ-

դանթով քսան երկու օր դիմադրե-
ցին Ռուսաց բռնուած մարտիկութեան :
Ռուսը ասան և չորս օր, տաններու
վաշտ հետեւեւ զօրք, 60 թնդանթ-
թօք և բաւական հեծեալ զօրք շա-
րունակ կը յարձակէին : Նիկոպոլայ
հրամանատար Հասան փաշա, որ գե-
րի ինչալով այս տեղեկութիւնները
տուած է, բեր է նաեւ թէ Նիկոպո-
լիս գլխադրելու համար տանն հինգ
հազար հետեւեւ զօրաց 24 թնդանթ-
թօք և երեք գունդ հեծեալ զօրաց
պէտք ունէր : Հասան փաշան չէ ու-
զեր հաւատալ թէ Դանուսն անցնող
Ռուսաց թիւը երկու հարիւր հազա-
րի կրնայ հասնիլ, քանի որ իրեն տը-
ռած տեղեկագրերը թնդանթն զօ-
րութիւնը միայն եթէ անասուն հազար
կը ցուցնէին : Պաշարման վերջին օ-
րերը Նիկոպոլայ զօրքերը տեսնելով
որ թնդանթն հետ բաղդաւամբ սա-
կաւթիւ էին, վհատելով պատերազ-
մի չէին ուզեր : Ռուսի զանոնք պա-
տերազմեցնելու համար Հասան փաշա
բռնութիւն բանեցնելու ստիպուե-
ր և երեք հազի իւր ձեռքով պահներ է :

Դանուսի կուսակալ Ահմետ փա-
շայէն եկած հեռագիր մը կը ծանու-
ցանէ թէ Ռուսուհի բնակիչ Սիւլէյ-
ման անուն անձ մը լուր տարեր է,
թէ Ռուսերը Ռուսուհիէն 7 ժամ հե-
ռի թուրք անուն գիւղին քրիստոն-
եայ բնակչոց տուններն ու եկեղեցի-
ներն հրդ հարակ ըրեր են, Ռուսաց
հազարեկ չուղեւորն պատճառաւ :
Յիշեալ գիւղին բնակչաց երեք
մասին երկուք քրիստոնեայ և մէկ
մասն ալ իսլամ է :

Դարաստացիք Օսմանեան զօրաց
մէկ մասին բաղդաւամբ թեւն օգուտ
քաղելով՝ դարձեալ յարձակողական
դիրք բռնե-
ր են, բայց Նիկոպոլայ վրայ
ըրած յարձակումին յետո մղուե-
ր է : Այս Սիւլէյ փաշա Շիւսեւի կողմն Օս-
մանեան սահմանագլուխը կը պահ-
պանէ :

Հաշտութեան համար միջնորդու-
թեան մը տակաւին յոյս չկայ : Առա-
րիկ և Հունգարիոյ նախարարները
վիճենա ի խորհուրդ կը գումարին
գինուորական միջոցներու վրայ խոր-
հելու համար : Բայց իրենց որոշումը
դեռ յայտնի չէ : Կերեկի որ եւրո-
պական տէրութիւնը հաշտութեան
ժամանակ պիտի միջամտեն՝ իրենց
շահերը պաշտպանելու համար, քան-
զի Լորտ Տերպի խորհրդարանին մէջ
յայտարարեց թէ չեղք ահալութեանց
զօրութիւնն անվթար լինելով իրենց
ձայնը լսել տարու կարող պիտի ըլ-
լան :

Կովկասեան բանակին բնդահանուր
հրամանատար Միքայիլ մեծ գնդին
հետեւեւ կը կրցուի կը հեռագրէ Հա-
յասան արշաւող ռուսական զօրաց
նահանջը :

Գլխավոր : 31 15
Հինգ : 418
Նոր : 178 20

ԱԶԳԱՅԻՆ

Կը յիշեն ընթերցողք, թէ Ազգ-
ժողովը իւր վերջին նստին մէջ նոր
Քաղ. ժողովը ընտրութիւնը կատա-
րելով, օրակարգէն անցուցած Ազգ.
Դատարարական մեծ խնդրոյն
վիճաբանութեանն ու որոշմանը ձեռ-
նարկելու համար արժանի դատեր էր
քանի մը շաբաթ միջոց տալ, որպէս
զի նոր Քաղ. ժողովը կազմուորի և
դատարարական խնդրոյն վրայ
բացուելիք վիճաբանութեան ներկայ
գտնուելով իրմէ սպասուած տեղե-
կութիւններն ու գիտողութիւնները
պատրաստելու ժամանակ ունենայ :

Մակայն Ս. Պատրիարքը փոխա-
նակ միամենայ պայմանաժամին լը-
րացմանն օգտուելու, որուն տակա-
ւին ու թ օր կոչ, վաղը Ազգ. ժողով
հրաւիրած է, անշուշտ բանաւոր
պատճառաւ :

Հասանելի նոյնքով, Ն. Որբազ-
նութիւնն ամենակարեւոր և անկա-
զական առաջարկութիւն մ'ունի ե-
զեր Ազգ. ժողովոյ ներկայացնելիք,
և այս պատճառաւ փութացուցեր է
ժողովին գումարուել :

Կը յուսանք որ լինի. երևալու-
թան է քննարկելու կը փութան ա-
ռանց զանցառութեան ներկայ գը-
նուելի վաղուան նստին, որպէս զի Ս.
Պատրիարք հօր ներկայացնելիք խնդ-
րոյն վրայ լրջաբար խորհուելով՝ ար-
ժանը տնօրինուի յօգուտ ազգին :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՆԻ

Ազնիւ Մասին .

Ուղղութեան հեռացած, հասարակաց
վստահութիւնը խաբած և վարկը կորու-
սած մէկն եթէ օր մը պատահմամբ ճըշ-
մարտութիւն մը խոստովանի, նոյն ճըշ-
մարտութիւնն ընդունելով հանդերձ՝ զի
ի յաւատարմից է այն, ըրած խոստովա-
նութեանը վրայ կը կասկածին մարդիկ,
և նոր խաղ մը կամ խորհրդաւանք մը
նշմարել կուզեն յայնմ :

Եւ որուն է յանգանքը. — անոր որ
կը կասկածի, թէ անոր՝ որ իր անցեա-
լովը կասկածելի եղած է. — հարկաւ վերջ-
նոյն է յանգանքը. — մեղքն իր վիզը ու-
րեմն :

Ղալաթիոյ խմբակն ալ՝ որ դժբաղդա-
րար այս կարգէն է, իր քայլերուն հըս-
կող, իր արարքը դիտող և իր դործերը
քննադատող զինուորի կուսակցութիւն
մ'իր դէմ ունենալուն վրայ փոխանակ
ցաւ գլխաւ և հրապարակին ախաղբուր
աղաղակներով լցնելու, կրնայ այսօրէն,
եթէ ուղէ, ուղիղ ընթացք մը դժեւ իրեն
համար և տակաւ առ տակաւ հասարա-
կաց վստահութիւնը դրաւել, որ յաջո-
ղութիւն գտնելու միակ և հատու մի-
ջոցն է :

Գիտեմ, խմբակն անհնարին պիտի
զայրանայ այժմ և ըսէ՝ ո՞րն է իմ կաս-
կածելի ընթացքը :

Շատ լաւ, ես ինչ որ ըսեմ, փա-
տեւում և իրողութեանց վրայ կուգում հիմ-
նել, որպէս զի համոզում մը յառաջ գայ
և խնդիրն օրինակոր լուծում մ'աւանդու :

Արդ՝ կը հարցունեմ,
Ա. Ուլ էր Ազգ. ժողովոյ մէջ կաթո-
ղիկոսական խնդիրն յարուցանողն, որ
եկեղեցւոյ միութեան վտանգ կ'սպառ-
նար և Ազգ. ժողովոյ այնչափ նիստերը
գոհելու պատճառ եղաւ :

Բ. Ուլ էր որ այդ խնդրոյն մէջ հա-
կապական զիրը ու ընթացք բունեց . . .
Գ. Ուլ էր կաթողիկոսական կոնգրակի
խնդիր յարուցանողը, կոնգրակի՝ որ Վա-
տիկան մը կը հաստատուէր յիշմարտին :

Դ. Ուլ էր օրինաց անթերի գործադ-
րութեան համար այնչափ վիճուել յու-
ղում և ներքին վէճեր յարուցանողն, և
ո՞վ էր օրինաց որոշելն սկզբուն և տըրա-

մագրութեանց հակառակ վարուողն ու
գործողը .

Ե. Ուլ էր զիջողական մինչ ի բարձունս
հանդէս, և ո՞վ զայն գահավիժել ուղղին .
Զ. Ուլ էր Մշակութեան ձեռք գործը-
ւած անկարգութեանց հեղինակն ու քա-
ջարը :

Է. Ուլ էր քանիցս վարչական և պատ-
րիարքական առաջնայ յարաբերողն .

Ը. Ուլ էր Ազգ. ժողովոյ խնդիրն ի Պը-
րոպարիկէ մաքրողը .

Թ. Ուլ էր Ղալաթիոյ թաղեցւոյն ընտ-
րական խառնուրդ բռնաբարողը .

Ժ. Ուլ էր . . .

Ի՜նչ, բաւական է այսչափը :

Հարկ է ըսել թէ ասոնք պարզ բը-
նութիւն ունենող խնդիրներ չեն. — ոչ,
զի ծանուցումը վրայինն է :

Ազգ. ինչ շահեցաւ ազգն ասոնցմէ .
— կորուստ ժամանակի :

Խմբակին ազգասիրութիւնը ուրեմն կ'ըսէ՝
երբ իրողութիւնը կը խօսի, կարծիք-
ները պէտք է լսեն :

Ահա յայտնի տեսնուեցաւ թէ ո՞վ է
եղեր ազգին կենսական խնդրոց տարի-
ներով յետաձգման պատճառը :

Ձարմանք . ինչո՞ւ ուրեմն դատարա-
րակութեան մահու և կենաց խնդրոյն
այնչափ յատկանշան պատճառ իրենց քով
չեն փնտրել և ուրիշ տեղ կը փնտրեն :

Ըստ իմ բուն զարմանալի կամ մահա-
ւանդ ծիծաղելի կէտն այս է որ այնչափ
քաղաքակրթեալ մեծ ազգաց դարերէ ի
վեր վերջնապէս չլուծած դատարարակա-
նութեան մեծ խնդիրն այսօր ի վաղիկէն
լուծուելու ձեռնհաս կը խորժէ ինքզինքն Ղա-
լաթիոյ խմբակը . . .

Կրեւն թէ հրապարակաւ անցած է, հի-
մա՞նք թէ անոր անորեքը դատ առնուն Ղա-
լաթիոյ խմբակէն :

Դատարարակութիւնն ըսելով եթէ կեդ-
րոնական վարժարանի մը հաստատութիւն
և վարժարանաց բարեկարգութեան ողոր-
մելի ծրարի մը վաւերացումը պիտի հաս-
կցուի, բարէ՛, տարակոյս չմնար բնաւ որ
Պողոսի թղթով մեկնութիւնը զրոյց երա-
նելոյն պէս մեր ազգն ալ մինչեւ երկրորդ
երկինքը պիտի բարձրանայ . . .

Կամ ազգը տղու տեղ դերը են այդ
մարդիկը, կամ իրօք խեղճերն են չհասնելի,
և կամ այսչափ յեղակարծ աճապարան
մէջ գաղտնիք մը կայ անշուշտ, որ իրա-
ւամբ կասկած կը զարթոնու հասարակաց
մտաց մէջ :

Աճապարում ըսի, և ահա նոր շնորհ
մ'ալ :

Պա՛հ մը վերտոնի եթէ աղբիւր թէ դատ-
արարակութեան խնդրոյն լուծմանն ար-
գելը եղող կուսակցութիւն մը կայ . սա-
կայն ինչ պիտի պատասխանէ յիշեալ
ազգանուէր խմբակն, երբ հարցնեմ թէ
ո՞վ էր Ազգ. ժողովոյ տարւոյս բաց-
ման ժամանակ երեսփոխանական ազո-
րինաւոր ընտրութեանց վաւերացման ի
նշմարտ խնդիր յարուցանողն, և ո՞վ էր
վարչական նոր տաղանակի հեղինակն ու
շարժառիթը, որ քանի նիստեր յուճկոտ
վստմելու պատճառ եղաւ :

Դատարարակութեան խնդրոյն յետա-
ձգմանը վրայ եթէ իրօք ցաւ կ'զգայ խմբ-
ակը, ինչո՞ւ նոր ու անձա՞նք խնդիրներ
կը յարուցանեն, անտեղի հարցադրուեմներ
կարծակէ և Ազգ. ժողովն անգործութեան
կը դատապարտէ :

Այս ամենը միթէ բաւական չէ՞ն հա-
տատուելու թէ դատարարակութեան խն-
դիրը պատուական մ'է ուսման սիրտն ու
ուշը դրաւելու և շահասիրական նպատակ-
ներ յառաջ տանելու :

Այո՛, կը կասկածիմ իրաւամբ, և այս-
պիսի արդար կասկած մը բնաւ մեղադ-
րելի չէ :

Գուցէ առարկեն . կասկածող իրաւա-
ցի է և ապաւ ես կասկածելու, որչափ
կուզես . բայց քու կասկածդ պատճառ մը
չէ դատարարակութեան խնդիրն յետա-
ձգելու :

Վատ է այդպիսի պահանջում մ'ընողը
Պարզեմ խնդիրը .

Դատարարակութեան խնդրոյն ոչ ոք
կայ հակառակող, զի յայնմ է միայն Ազ-
գին փրկութիւնը . բայց այն որ քիչ շատ
ուսումնասիրած է դատարարակութեան
խնդիրը, այն որ քիչ շատ ըմբռնած է
նորա սահմանը, այն որ գիտէ ժամանա-
կին պահանջներն, ազգին փրկակար և

նորա կարեւորագոյն պէտքերը, համա-
ռած է որ այնպիսի մահու և կենաց մեծ
խնդիր մը խորին ուղարկութեամբ լը-
ջարար լուծուելու մէջ ո՞րչափ օգուտներ,
և հապճեպով հարեանցի լուծուելու մէջ
ալ ո՞րչափ փնտրանք կան :

Եւ ինչ, դատարարակութեան խն-
դիրն միթէ նուա՞ղ կարեւորութիւն ունի
պա՞հ մ'առաջ թուած խնդիրներէս, որ
տալ ինչքով Ազգ. ժողովն զբաղեցուցին :

Շատ մը թաղերու և դատարաց վար-
ժարաններն որ շատ տարիներէ ի վեր
խմբակին անդամաց տեսնութեանն ու
հակողութեանը ներքեւ կը գտնուին, ինչ
արդիւնք և ինչ յառաջդիմութիւն ու-
նեցան, քանի՞ ուսեալ և բարեկրթ մե-
ղամներ այդ վարժարաններն ազգին ըն-
ծայեցին . և կամ Ղալաթիոյ վարժարա-
նը՝ որ 17 տարիէ ի վեր անընդհատ շա-
րունակութեան մէջ է, ինչ արդիւնք
կրցանցոյց տալ փոխադէն այնչափ դու-
մարներուն՝ որ կրնային աւելի օգտա-
կար կերպով գործածուել և դատարարակ-
ան վարժարանի մը շուքն ու համբաւն արդ-
եամբ բարձրացնել :

Թո՛ղ այդ վարժարանէն ելած 3-4 ա-
շակերտ ցոյց տան ոչ թէ գրաբար, այլ
կանոնաւոր քանի մը տող աշխարհագրո-
գրելու կարող՝, և ես հրապարակին վրայ
ամօթաշար մնամ :

Ըսել չեմ ուզել թէ այդ վարժարանն
խաղաւ ապարդիւն մնացած է, բայց իր
ունեցած այնչափ զիւրութիւններովն ու
զիրքով կրնար խիստ օգտակար ըլլալ,
եթէ աւելի հմուտ և ձեռնհաս առաջնոր-
դութեան մը ներքեւ գրուած ըլլար :

Ի գործ ուրեմն գոռում գոչումներով
հրապարակը թող չլնու Ղալաթիոյ խմբ-
ակը, վստի զի դատարարակութեան
խնդրոյն լուծմանն արգելք եղող կուսակ-
ցութիւն մը չկայ, և եթէ մինչեւ ցարդ
եւտ մնացած է, ատոր ալ պատճառը
զարձեւալ խմբակն եղած է, ինչպէս որ
հաստատուեցին իրական փաստերով :

Այս է ահա անուտ ճշմարտութիւնը :

. . .

1877 յուլիս 3 Մարտարա

. . . Խմբակի Մասին ազգագուտ լը-
րագրոյ .

Ազգանուէր լրագրոյդ մտակայ թեր-
թերուն միոյն մէջ հաճեցէք հիւրնկալել
յետագայ ազգային հրապարակական ըն-
տրակալութեան նամակն . որուն համար
հաճեցէք նաև ընդունել խորին յարգա-
նաց հաւատարմութիւն :

Մ. Յարութեան Մ. Պողոսեան

Ահաւասիկ յիշեալ նամակին պատճէնը .

Ամենապատիւ Սրբազան Հայր .

Մեր աղետալի փրկակար Նկարագիրն
եղող նախորդ նամակն ընդունելով և
անոր անմիջական դարմանն հողաւորի խա-
ցանք Ազգ. ժողովոյ առաջնորդական
փոխանորդ Արթ. հօրմէն . և ինչպէս
մեր վիշտերն՝ նոյնպէս մեր միջթարական
յոյսերն խոնարհաբար Ձեր Բարձր. Սըր-
բազնութեան ներկայել կը համարձակինք
այժմիկ : Սրբազան Հայր, Ձեր աղագէտ
շանից շնորհիւ տեղւոյս Գայմազամիւն
Ազգ. ժողովոյ կուսակցութեան և Ռոտոս-
թոյի կառավարչէն խիստ ազդարարու-
թիւնք եկան, նա ալ փութաց ինքնին
գիւղերը շրջելով պատուիրել Ձեզեզաց
տէրութեան արդար կամքը, և մի քանի
օրէ ի վեր քիչ կը լուրին գործութիւնք,
և այսու կը յուսանք թէ քիչ մը ապահո-
վութիւն տրելով ամեն մարդ իւր գոր-
ծերովն պիտի կարենայ դադրել . ո՞հ ար-
դէն կորչունին խղճալի ազգէս այն ա-
նուններն, որը հաճեցան ի սէր ազգու-
թեան և յանուն մարդկութեան գոհել
իրենանց քերտն ու աշխատութիւն . ու-
րեմն համարձակապէս կը նուիրենք մեր
խոնարհ շնորհակալաց հաւատարմութեան
առ Ամեն . Սրբազնութիւնը և առ պատկա-
ռելի Ազգ. ժողովը որ վաղ ընդ փոյթ
հաճեցաք կառավարութեան ուղարկու-
թիւնն հայցել . շնորհակալ ենք Արթա-
նուազոյ երեսփոխան Մեծ . Ռուբէն
էֆենդիին որ Թուրքիոյ երեսփոխանա-

* Դատարարակութեան խնդիրն որ աշակերտ-
ներուն ալ կարեւորն սովորեցնել :

կան խորհրդարանին մէջ չմտցաւ յիշել
տարաբար Մարտարայի անունը և առա-
ջակութեանց բարձումը պահանջեց . շնոր-
հակալ ենք Մարտի և Մանգուլի Մե-
ծարդոյ և ազգասէր խմբագրուպետ է-
ֆենդիներէն, որը իրենց լրագրաց էլնե-
րը նուիրեցին մեր վիճակաւորաց . և որոց
մին հաճեցաւ իւր խորհրդածութիւնն
ընելով կառավարութեան ուղարկութեանն
յանձնել . ո՞վ չըլտեր որ կառավարու-
թիւնն երբեք չներքն աշխարհակ հարա-
տահարութեանց . և ահա ապացոյցն ան-
միջապէս տեսնուեցաւ ազգարարական
գրքի հոս դադրել . և դարմանն ալ գրեթէ
տեսնուելով, այն է այս օրերս աւագակ-
ներու շրջովը և շտեմուելով : Ուստի հը-
րապարակաւ կը մարդկենք և շնորհակալ
կըլլանք տէրութեան վեհաշուք նախա-
յարաներէն մնալով միշտ օրհնեղու :

Ի դիմաց Թաղ. խորհրդոյ
Նախագահ

Բարձրագոյն Գեղ. Ս. Պողոս Եֆենդի-
Ամենապատիւ Ամենապատիւ
Մ. Միքայէլ Մ. Յարութեան
Մ. Սարգիսեան Մ. Պողոսեան

. . . Խմբակի Մասին պատուա-
կան լրագրոյ .

Ճեմ. երկ. վարժարանիս հար-
ցաքնութիւնը պիտի կատարուի
ըստ ներփոխակի ցուցակի :

Ուստի կը խնդրեմ որ բարեհա-
ճիք նոյն ցուցակն իւր ամբողջու-
թեամբ հրատարակել :

Հաճեցէք ընդունել մեր խորհիմ
յարգանաց հաւատարմութիւն :

19 յուլիս 1877 Ի դիմաց Հրապարձ-
իւակ. Նոր—թաղ Գ. Յ. Միքայէլ

ՅՈՒՅՈՒՅ ՀԱՐՑԱՔՆՆԵԼԻ ՈՒՍՄԱՆՅ

ՃԵՄ. ԵՐԿԱՍ. ՎԱՐՃԱՐԱՆԻ

Իւսկիւտար Նոր Թաղ

25 Յուլիս 1877. Կրօնագիտութիւն,
Սրբազան և Ազգային պատմութիւն,
Քրիստոնէական :

27 Յուլիս 1877. Թուրքագրութիւն,
Աշխարհագրութիւն, Արեւելագրութիւն,
Գիտութիւն :

29 Յուլիս 1877. Տաճկերէն, Գաղ-
ղիերէն :

1 Օգոստ. 1877. Հայերէն իւր ճիւ-
ղերովն, Անգլիարէն :

3 Օգոստ. 1877. Ձեռագործ, Դաշ-
նակ, Գեղագրութիւն, Գծագրու-
թիւն :

5 Օգոստ. 1877. Վարժարանիս ուս-
մանը ընթացքն աւարտող աշակեր-
տաց և աշակերտութեան ամեն ուս-
մանց հարցաքննութիւն :

Երկրորդ ական դատուց քննու-
թիւնն եթէ վերագրեալ օրերը կա-
տարել անկարելի ըլլայ, յաջորդ օ-
րերը պիտի շարունակուի :

Հարցաքննութիւնը միշտ առա-
ւօտուն ժամը ճիշդ. երեքին պիտի
սկսին և մինչև տասն տեւեն, կէս օ-
րին մէկ ժամ միայն դադար տալով :

Ի Ա Ս Ն

Ասաքիւրի շահանէ հայկանալը և
չուն շայիւր վէ սաման անպարը ինչ
նանը աղիղ խաղախի իշուն միւլայայ
եա օլունանաք 80000 գանթար սա-
ման ալթը մահ զարֆընտա թէսլիմ
գըլընմաք վէ էսմանը մուղթաղիյէսի
թէսլիմիսի միւլայէյիյէ վիւրէյէնէք օ-
լուն մագպուղ սէնէտըրի վիւրուալն-
տէ երեղիւք գայիսէ երեղ զրշա օ-
լարաք թալիսի էօտէսիստէ օլուլ
թէսլուղը բուլմիսի 23 ինճի փէնճէյիսի
կիւնիւ գարաղը գաթիսի վիւրէյէնէյիսի
տէն, իվա իվալէյէ թալիսի օլանլարըն-
եէվի մէղքիւրտէ Տարի Շուրայի աս-
քէրիյէ կէլմէյիսի :

18 թէսլուղ 1877

Պապը Սէրասքէրի

դեկտեմբեր Կամար պէտք է դիմել Մի-
սիիոյ Բէլլէմպէ բաղարի մօտ Կլավմանի
Ի. Բաբոյ քորմակատար